Գեղագիտության
Ազգային
Կենտրոն

ՀՀ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

EREBUNI

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Հ.Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոն

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան

Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոն

«Ինքնաճանաչում. Էրեբունի»

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնը՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի հետ համատեղ, 2022թ.-ին կազմակերպում են Համահայկական մանկապատանեկան նկարչական ամենամյա մրցույթ-փառատոնը՝ «Ինքնաճանաչում. Էրեբունի» խորագրով: Այն նվիրված է ճարտարապետությամբ, տեղակայմամբ և ներկայացվող նյութով բացառիկ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանին և այնտեղ ներկայացված Վանի թագավորության հնագիտական ժառանգությանը:

Վերջին մի քանի տարիները մարտահրավերներով լի են ինչպես ողջ աշխարհի, այնպես էլ, հատկապես, Հայաստանի Հանրապետության համար: Այս հարափոփոխ և անկայուն իրականության պայմաններում այսօր, առավել քան երբևէ, կարևոր ենք համարում հայոց պատմությանն ու մեր արմատներին առավել խորությամբ անդրադառնալու հրամայականին ականջալուր լինելը: Այդ է պատճառը, որ 2022թ-ին Համահայկական մանկապատանեկան մրցույթ-փառատոնն անցկացվում է «Ինքնաճանաչում. Էրեբունի» խորագրի ներքո: Այն հրաշալի առիթ կդառնա նոր սերնդի համար՝ սեփական ինքնության ակունքները բացահայտելու և ինքնաճանաչմամբ ստեղծագործական նոր ազդակներ ստանալու համար: Գեղագիտության ազգային կենտրոնն իր սաների համար 2021թ. -ին նախաձեռնեց համանուն կրթական նախագիծ, որը կամփոփվի 2022թ. ամռանը՝ հատուկ ցուցադրությամբ: Հիմնվելով այդ փորձի և գրանցած հաջողության վրա՝ ԳԱԿ-ն ընդլայնում է այն՝ ներկայացնելով համահայկական մրցույթ-փառատոնի ձևաչափով:

Մրցույթ-փառատոնի մասնակիցներ.

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել 6-18 տարեկան արվեստասեր և ստեղծագործական շնորհք ունեցող հայ մանուկներ և պատանիներ ամբողջ աշխարհից՝ Հայաստանի, Արցախի և սփյուռքի բոլոր տեսակի կրթօջախների սաները, ինչպես նաև պարզապես ստեղծագործող, սակայն որևէ մասնագիտական հաստատություն չհաճախող երեխաները:

Խնդրում ենք հաշվի առնել, որ եթե մասնակիցը ներկայացնում է որևէ կրթական հաստատություն, ապա հայտը պետք է ուղարկի տվյալ կրթօջախը:

Մրցույթ-փառատոնի անցկացման կարգ.

<u>Առաջին փուլ</u>՝ 05.04 – 15.05.2022

Հայաստանի, Արցախի և Սփյուռքի կրթօջախների սաները և անհատները կարող են գրանցվել առցանց հղման միջոցով.

հայերեն՝ https://forms.gle/hQZaxg5h1RNW7Atp7

ռուսերեն՝ https://forms.gle/k3VvbtYeLXcFVecV9

անգլերեն՝ https://forms.gle/ATMnqHraCQWM84h58

<u>Երկրորդ փուլ</u>՝ 23.05 – 12.06.2022

Գրանցված մասնակիցները առցանց 5 դասընթացների միջոցով կծանոթանան «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանին և ուրարտական ժամանակաշարջանի պատմությանը, ճարտարապետությանը, արվեստին և մշակույթին:

<u>Երրորդ փուլ</u>՝ 15.08 – 15.09.2022

Աշխատանքները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով:

1. էլեկտրոնային նամակում նշված լինի.

   ա/ աշխատանքի անվանումը, ֆիզիկական չափերը և տեխնիկան,

   բ/ հեղինակի անունը, ազգանունը, բնակության երկիրը, քաղաքը, տարիքը և կրթական հաստատությունը (այն դեպքում, եթե նկարը ներկայացվում է ոչ թե անհատի, այլ որևէ կրթօջախի կողմից) և կապի միջոցները՝ էլ. հասցե, հեռախոսահամար,

գ/ նկարչություն դասավանդող մանկավարժի անունը, ազգանունը և կապի միջոցները՝ էլ. հասցե, հեռախոսահամար:

<u>Չորրորդ փուլ՝</u> 15.09 – 25.09.2022

3 անձից բաղկացած հանձնաժողովի կողմից կընտրվեն այն աշխատանքները, որոնք կներկայացվեն ցուցահանդեսին:

<u>Հինգերորդ փուլ՝</u> 01.10 – 15.10.2022

Մասնակիցները ներկայացնում են իրենց աշխատանքների բնօրինակները՝ ցուցադրման համար: Փոստային կնիքի ամսաթիվը պետք է դրված լինի 01.10 – 15.10.2022 ժամանակահատվածում:

Աշխատանքի բնօրինակի հետևի մասում կցել՝

ա/ աշխատանքի անվանումը, ֆիզիկական չափերը և տեխնիկան,

բ/ հեղինակի անունը, ազգանունը, բնակության երկիրը, քաղաքը, տարիքը և կրթական հաստատությունը (այն դեպքում, եթե նկարը ներկայացվում է ոչ թե անհատի, այլ որևէ կրթօջախի կողմից) և կապի միջոցները՝ էլ. հասցե, հեռախոսահամար,

գ/ նկարչություն դասավանդող մանկավարժի անունը, ազգանունը և կապի միջոցները՝ էլ. հասցե, հեռախոսահամար:

Աշխատանքների բնօրինակները փոստով կամ առձեռն պետք է փոխանցվեն Գեղագիտության ազգային կենտրոնին.

National Centre of Aesthetics, Children's art museum, Abovyan 13, Yerevan, 0001, Armenia Yerevan,

0001, Երևան, Աբովյանի 13, Գեղագիտության ազգային կենտրոն

Ծրարի (ծանրոցի) վրա պետք է լինի **«HAMAHAYKAKAN NKARCHAKAN MRTSUYT»** նշումը:

Առցանց դասընթացների արդյունքում ձեռք բերված գիտելիքներն ու տպավորությունները մասնակիցները կամբողջացնեն կերպարվեստի զանազան տեխնիկաներով և արվեստի ժամանակակից ուղղություններով ստեղծված աշխատանքների տեսքով՝ ներկայացնելով պատմական այդ շրջանի սեփական մեկնաբանությունը:

Նախագծի ավարտին մասնագիտական հատուկ հանձնաժողովի կոմից ընտրված լավագույն աշխատանքները կներկայացվեն Գեղագիտության ազգային կենտրոնի թանգարանում՝ հատուկ ցուցադրությամբ:

Մասնակիցներին կտրվի մասնակցության վկայական, հաղթողներին՝ մրցանակներ և վկայական:

Մրցույթ-փառատոնի ժամանակացույցը.

N	Գործողություն/աշխատանք	Ժամկետ
1.	*Առաջին փուլ՝ գրանցում*	05.04 – 15.05.2022
2.	*Երկրորդ փուլ՝ առցանց դասընթացներ*	23.05 – 12.06.2022
3.	*Երրորդ փուլ՝ աշխատանքների էլեկտրոնային ներկայացում*	15.08 – 15.09.2022
4.	*Չորրորդ փուլ՝ աշխատանքների ընտրություն*	15.09 – 25.09.2022
5.	*Հինգերորդ փուլ՝ բնօրինակ աշխատանքների ուղարկում*	01.10 – 15.10.2022
6.	*Յուցահանդես*	2023թ. առաջին եռամսյակ

Հավելյալ հարցերով կարող եք դիմել.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն.
հեռ. +374 10 599-647
Էլ.փոստ. tamara.zalinyan@edu.am
Կայքէջ. www.edu.am
Էջ Facebook-ում. «Սփյուռքի բաժին ՀՀ կրթգիտնախ»

Գեղագիտության ազգային կենտրոն.
հեռ. +374 60 833-383
Էլ.փոստ. nca.contemporary@gmail.com
Կայքէջ. www.nca.am
Facebook. Henrik Igityan National Centre for Aesthetics